ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2015 թվականի նոյեմբերի 25-ին կայացած նիստի

Օրակարգը

1. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Գրիգորյանի հաշվետվությունը մեկ տարում կատարված աշխատանքի վերաբերյալ:

/զեկուցող Մ.Ա.Գրիգորյան/

Նիստը ղեկավարելու համար առաջարկվեց պրոֆ. Ռ.Մինասյանի թեկնածությունը:

Առաջարկությունն ընդունվեց:

Նիստին ներկա էին 38 անդամներից 35-ը:

ԼՍԵՑԻՆ - Մ.Ա.Գրիգորյանի հաշվետվությունը մեկ տարում կատարած աշխատանքի վերաբերյալ (զեկուցումը կցվում է):

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ

Միտուշ Թորոսյանը – Առաջարկում եմ դեկանի աշխատանքը գնահատել բավարար: Մ.Թորոսյանը նշեց, ուր հաշվետու ժամանակահատվածում դեկանի կողմից կատարվել է մեծ ծավալի աշխատանք: Նշեց նաև, որ ցանկալի է ուշադրություն դարձնել կուրատորների կատարած աշխատանքին: Կուրատորը պարտավոր է հետևողական լինել ծրագրով նախատեսված յուրաքանչյուր կետին՝ ծանոթ լինել յուրաքանչյուր ուսանողի առաջադիմությանը, ծանոթացնի վերջիններիս ուսումնական կրեդիտային համակարգին, ուսումնական գործընթացի կազմակերպման և անցկացման բնույթին: Ինչպես նաև անդրադարձավ աշխատանքային կարգապահությանը ֆակուլտետում՝ շեշտելով մանկահասակ երեխաներ ունեցող աշխատակիցների աշխատաժամերին:

Ռ.Մովսեսյանը – Առաջարկեց դեկանի կատարած աշխատանքը գնահատել բավարար: Ռ.Մովսեսյանը նշեց, որ դեկանի անմիջական համագործակցությամբ Mcromine ծրագրի ղեկավարների հետ, ամբիոնի լսարաններն ամբողջովին համալրվել են համակարգիչներով և համապատասխան ժամանակակից սարքավորումներով: Ռ.Մովսեսյանն առանձնացրեց <Օգտակար հանածոների հանքավայրերի> մասնագիտացման մագիստրոսների

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը 2014/2015 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանն ընդգրկում է 2014թ դեկտեմբերի 1-ից մինչև օրս: Նշված ժամանակաշրջանում դեկանատի աշխատանքն ուղղված է եղել հիմնականում ֆակուլտետում ուսումնական գործընթացի, գիտական աշխատանքների կազմակերպմանը, ինչպես նաև աշխատանքային կարգապահության պահպանմանը: Ներկայումս ֆակուլտետում գործում է 7 ամբիոն, որոնցում աշխատում են 9 գիտությունների դոկտորներ, 33 դոցենտներ և գիտությունների թեկնածուներ, 14 դասախոս: Ֆակուլտետի բակալավրիատի ցերեկային բաժնում սովորում են 849 ուսանող, հեռակա բաժնում՝ 328 ուսանող, մագիստրատուրայի առկա բաժնում՝ 111 ուսանող, հեռակայում՝ 32: Այսօրվա դրությամբ ֆակուլտետում սովորում են 1320 ուսանող:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում սովորում է 17 ասպիրանտ, որից 5-ը՝ առկա, 7-ը՝ հեռակա, 5-ը՝ արտերկրից (Իրանից): Հաշվետու ժամանակաշրջանում պաշտպանվել է թեկնածուական 6 թեզ:

Ընդունելությունը բակալավրիատում կատարվում է 4 մասնագիտությունների՝ աշխարհագրություն, երկրաբանություն, սերվիս և քարտեզագրություն և կադաստրային գործ:

Երկրաբանություն մասնագիտությամբ 5-րդ, իսկ աշխարհագրության մասնագիտությամբ 6-րդ կիսամյակից, ուսուցումը կատարվում է ըստ մասնագիտացումների, որոնց թիվը հասնում է 8-ի:

Ֆակուլտետի դեկանատը՝ համագործակցելով ԵՊՀ մինչբուհական վարչության հետ, լուրջ աշխատանքներ է կատարել մայրաքաղաքի և մարզերի դպրոցներում, քոլեջներում սովորողների հետ՝ ֆակուլտետի մասնագիտությունները ներկայացնելու և մասնագիտական կողմնորոշումն ուղղորդելու նպատակով: Այդ նպատակով ֆակուլտետի աշխատակիցները հանդիպումներ են ունեցել հանրապետության տարբեր դպրոցների աշակերտների հետ: Բացի դրանից՝ ապրիլ ամսին մեր ֆակուլտետում, Գյումրիում, Վանաձորում անցկացվեց դպրոցականների օլիմպիադա աշխարհագրության գծով, որին մասնակցեց 110 դպրոցական: Ուզում եմ նշել, որ օլիմպիադային մասնակցած դպրոցականների մեծ մասը դիմել և ընդունվել են մեր ֆակուլտետ: Հաշվետու ժամանակաշրջանում տարբեր դպրոցների աշակերտներ հրավիրվել են ֆակուլտետ, ծանոթացել են ֆակուլտետին, զրուցել դասախոսների և ուսանողների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոններում և մեթոդխորհրդում կատարվել են աշխատանքներ, որոնց արդյունքում մենք այսօր կարողանում ենք լավագույնս կազմակերպել ուսումնական գործընթացը: Վերանայվել և թարմացվել են «Աշխարհագրություն», «Երկրաբանություն», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Սերվիս»

մասնագիտությունների, ինչպես նաև մագիստրոսական ծրագրերի առկա և հեռակա ուսումնառության ուսումնական պլաններն ու համապատասխան ծրագրերը: Վերանայվել, խմբագրվել են կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը: Ստեղծվել է աշխատանքային խումբ, որը ուսումնասիրում է որոշ դասընթացների էլեկտրոնային ուսուցման հնարավորությունները և այդ բնագավառում տեղի ունեցող նորությունները, հետազոտությունների արդյունքները և նորամուծությունները:

Մեթոդխորհուրդը տպագրության է երաշխավորել 2 դասագիրք, 2 մենագրություն, 5 ուսումնական ձեռնարկ, 2 մասնագիտական բացատրական բառարան և մեկ քարտեզ:

Չնայած կատարած աշխատանքին կարծում եմ, որ մենք դեռևս մեծ աշխատանք ունեն կատարելու հատկապես նոր դասընթացների ծրագրերի մշակմամբ, ժամանակակից գիտության և արտադրության պահանջներին բավարարող ծրագրերի կազմման, նոր դասընթացների ներդրման ուղղությամբ:

Ներկայումս ռեկտորատի կողմից աշխատանքներ են տարվում մշակելու համալսարանի զարգացման ծրագիր՝ ելնելով դրանից մեր ամբիոնները մշակել և դեկանատի կողմից ռեկտորատ են ներկայացրել ֆակուլտետի զարգացման ծրագիրն ըստ մասնագիտությունների: Ըստ իս չէի ասի, որ այդ ներկայացված ծրագիրը կատարյալ էր, բայց այն հնարավորություն է տալիս մեզ կանխատեսելու ֆակուլտետի զարգացումը մոտակա տարիներին:

Բոլորս էլ գիտենք ֆակուլտետում քննություններն ու ստուգարքներն անց են կացվում կրեդիտային համակարգով, այն բացթողումները, որոնք եղել են անցած ուս.տարում, կարող ենք նշել, որ այս ուս.տարում դրանք վերացել են: Ուսանողների հետ հանդիպումների ժամանակ, հաճախ լսում ենք քննություններն անաչառ անցկացնելու, բացասական երևույթները վերացնելու մասին: Շատ հաճախ էլ այդ մասին ուսանողներն իրենց գրավոր կարծիքն են արտահայտում սոց.հարցման թերթիկներում: Ելնելով դրանից՝ ամբիոններում ֆակուլտետի խորհրդում քննարկվել են սոց.հարցման արդյունքները: Ծանոթանալով ուսանողների կողմից արվող առաջարկությունների և կարծիքների հետ, ինչպես նաև բաց, անկեղծ զրույցը նրանց հետ՝ եկել եմ այն կարծիքին, որ ուսման գործընթացի կազմակերպման, դեկանի, տեղակալների, ամբիոնի վարիչների, դասախոսների, լաբորանտական անձնակազմի կատարած աշխատանքի վերաբերյալ կա ուսանողների կողմից դրական կարծիք: Ընդհանուր առմամբ ուսանողները գոհ են և բարձր են գնահատում ֆակուլտետի դասախոսական անձնակազմի, աշխատակիցների կատարած աշխատանքը ֆակուլտետում: Չնայած առանձին դեպքերում ունենք նաև ոչ հաճելի հարցադրումներ: Հատկապես դասախոսական նյութը մատուցելու, դասախոսի պահվածքի և ոչ արդարացի վերաբերմունքի վերաբերյալ: Այստեղ է, որ մենք բոլորս, ամբիոնի վարիչները պետք է լուրջ մոտեցում ունենանք և խիստ պահանջներ ներկայացնենք նման դասախոսներին և նրանց վարքագիծը քննարկման հարց դարձնեն ամբիոնի նիստերում և ֆակուլտետի խորհրդի նիստում:

Վերջերս, երբ ծանոթանում էի ուսանողական հարցման արդյունքներին….

Ուսումնական պրոցեսի օրգանական շարունակությունն են հանդիսանում ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպումը և անցկացումը: Այդ ուղղությամբ մեծ աշխատանքներ են տարվել դեկանատի և ամբիոնների կողմից:

Ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողների ուսումնական պրակտիկան կազմակերպվում է հանրապետության տարբեր մարզերում (երթուղիներով) և Բյուրականի ուսումնական բազայում: 2-րդ կուրսի պրակտիկան կազմակերպվում է Հանքավանի ուսումնական բազայում և ՀՀ տարբեր շրջաններում (ավտոբուսային երթուղիներով): Փոխադարձ պայմանագրով ուսումնական պրակտիկան ֆիզիկական աշխարհագրության գծով՝ կազմակերպվում է Սանկտ Պետերբուրգում (10-15 ուսանող): Երկրաբանություն մասնագիտության գծով կապ է ստեղծվել Պերմի համալսարանի հետ:

Համոզված եմ, որ 2016թ կլինեն համատեղ այցելություններ Պերմ և Երևան:

Երրորդ կուրսի ուսանողների ուսումնմական և արտադրական պրակտիկան կազմակերպվում է տարբեր կազմակերպություններում և հիմնարկներում, ինչպես նաև Սյունիքում (աշխարհագրության և սերվիսի ուսանողները): Երկրաբանության մասնագիտության ուսանողները (1-ին կուրս) 4 օրով մեկնում են Արցախ:

Կարևոր նշանակություն ունի նաև Աշխարհագրության մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների մանկավարժական պրակտիկայի կազմակերպումն ու անցկացումը: Այն հիմնականում կազմակերպվում է Երևան քաղաքի դպրոցներում: Առկա ուսուցման ծրագրերում նախատեսված ուսումնական պրակտիկաները նախատեսված են նաև հեռակա ուսուցման ծրագրերում, որն անհրաժեշտ է, լիարժեք մասնագետ պատրաստելու համար: Դիմորդների կողմնորոշման համար կարևոր նշանակություն ունի ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպումը: Ուսումնական, արտադրական ինչպես նաև այլ երկրներում պրակտիկաների կյազմակերպումը էլ ավելի հետաքրքրություն է առաջացնում դիմորդների մոտ ֆակուլտետ ընդունվելու համար:

Կցանկանայի նորից ասել Մարմարիկ հանգրվանի շենքային պայմանների և կացարանների վիճակի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ հանգրվանի շենքային պայմանները բավարարում են այսօրվա, այնտեղ բնակվելու պայմաններին: Բավականին լավ պայմաններում է գտնվում խոհանոցի և ճաշարանի տարածքը: Բայց նշված թվով մոտ 200 և ավել ուսանողներ ընդունելու համար շենքային տարածքը չի բավարարում: Հասկանալի է, որ համալսարանն այսօր չունի անհրաժեշտ ֆինանսական միջոցները հանգրվանն ամբողջովին վերակառուցելու: Բայց ուզենք թե չուզենք մենք այն պետք է կատարենք, եթե ցանկանում ենք բարձր որակավորման երկրաբաններ, աշխարհագետներ, կենսաբաններ պատրաստել: «Մարմարիկ» հանգրվանի լիարժեք օգտագործման դեպքում կկրճատվի ավտոմեքենայով կատարվող երթուղիների թիվը:

Հաշվետու ժամանակահատվածում մեր բոլոր ամբիոնների կողմից բավականին աշխատանք է տարվել ուսումնական, գիտական աշխատանքների ուղղությամբ:

Այսպես

<u>Ռեգիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների հանքավայրերի ամբիոնում</u> Ուսումնական պրոցեսը արդյունավետ կազմակերպելու համար թարմացվել են ցուցադրական նյութերը: Լաբորատոր պարապմունքների արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար պատրաստվել են նոր ցուցադրական նմուշներ և գծապատկերներ: Տարբեր հանքավայրերից ձեռք են բերվել ապարների և միներալների նոր ցուցադրական նմուշներ, որոնք ուսանողների կողմից ուսումնասիրվում են վերջերս ձեռք բերված ժամանակակից ապարագրական և միներալաբանական միկրոսկոպներով:

Ամբիոնը համագործակցում է մի շարք արտադրական ընկերությունների («Գեզամետ Պլյուս», «Գեոքիմ», «Ատ-Մետալս») հետ, ինչը հնարավորություն է տալիս ամբիոնի դասախոսներին և ուսանողներին ներգրավել ՀՀ-ում իրականացվող երկրաբանական քարտեզագրման, երկրաբանական-հետախուզական և շահագործական աշխատանքներում:

Գերմանացի գործընկերների հետ ուսումնասիրվել են ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վարդաձորի օղակաձև կառույցի շրջանում տեղադրված Կաշենի պղնձի հանքավայրի երկրաբանական կառուցվածքը, հանքաքարերի միներալաբանությունն ու առաջացման ֆիզիկա-քիմիական պայմանները:

Ամբիոնում հիմնավոր ուսումնասիրություններ են կատարվում ՀՀ Սևանի օֆիոլիթային գոտու սահմաններում: Շ.Խաչատրյանի, Հ.Գույումջյանի կողմից առաջին անգամ կազմվել է Սևանի հյուսիս-արևելյան ափի 1:10 000 մասշտաբի երկրաբանական քարտեզը: Քարտեզագրման աշխատանքների ընթացքում ճշտվել են երկրաբանական կառուցվածքի առանձին մանրամասներ ինչպես նաև հայտնաբերվել են քրոմիտների և պլատինի հանքակուտակումներ:

Քիմիայի ֆակուլտետի էկոլոգիական քիմիայի ամբիոնի հետ համատեղ մշակվել է մագնեզիումա-սիլիկատային ապարների հավելումով պորտլանդ ցեմենտի ստացման տեխնոլոգիա, որը թույլ է տալիս ավելի քան 30%-ով ավելացնել ցեմենտաքարի ամրությունը, միևնույն ժամանակ 30-40%-ով իջեցնել ցեմենտի ինքնարժեքը:

Ամբիոնը համագործակցում է Իտալիայի Ազգային Հետազոտությունների Խորհրդի Միջուկային քիմիայի ինստիտուտի, Յենայի (Գերմանիայի) Ֆրիդրիխ Շիլլերի համալսարանի, երկրագիտության ինստիտուտի, Ֆրայբերգի Լեռնային ակադեմիայի և Լիլի (Ֆրանսիա) պետական համալսարանի հետ: Վերջերս համագործակցության նոր փուլ է ստեղծվել Կրետեյի պետական համալսարանի հետ:

ՕՀՀ որոնման և հետախուզման ամբիոն

Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել են ուսումնական պլանները և որոշ առարկաների ուսումնական ծրագրերը, կատարվել են նյութերի թարմացում: Փոփոխության է ենթարկվել մագիստրատուրայի ուսումնական պլանը՝ մշակվել է Երկրաբանություն մասնագիտության նոր ուս.պլանը: Ամբիոնի կողմից ներկայումս մշակվում է նոր մագիստրոսական մասնագիտական ծրագիր՝ Հանքահումքային ոլորտի կառավարում: Մագիստրատուրայում շարունակվում է ուսումնասիրվել «Micromine ծրագրերի կիրառման հնարավորությունը երկրաբանա-հետախուզական աշխատանքներ» առարկայի դասավանդման ընթացքում: Մշտապես կատարվում են լաբորատոր աշխատանքների անցկացման համար անհրաժեշտ նյութերի բազայի ընդլայնում:

Աշխատանքներ են տարվել կուրսային, ավարտական աշխատանքներում, մագիստրոսական թեզերում ուսանողի ինքնուրույն աշխատանքի մասնաբաժնի ընդլայնման ուղղությամբ, ընդգրկելով ավելի մեծ տարածաշրջանների և նոր հանքավայրերի մանրամասն ուսումնասիրություններ:

Ամբիոնի կողմից վերանայվել և լրացվել են ֆակուլտետի կրեդիտային համակարգով ուսումնառության առկա և հեռակա բաժինների ուղեցույցերը:

Ամբիոնի դասախոսների ջանքերի շնորհիվ կազմակերպվել է ուսանողների դաշտային արտադրական պրակտիկաների կազմակերպումը գործող երկրաբանա-հետախուզական արշավախմբերում:

Ամբիոնի աշխատակիցները սերտ կապեր են պահպանում մասնավոր արտադրական ձեռնարկությունների և գիտական կազմակերպությունների հետ, մասնակցելով վերջիններիս կողմից կազմակերպվող դաշտային աշխատանքներին:

Երկրաֆիզիկայի ամբիոն

Թարմացվել են ամբիոնում դասավանդվող առարկաների ուսումնական ծրագրերը: Տեսական և գործնական պարապմունքներում կիրառվում են ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներ և ժամանակակից սարքավորումները:

Ամբիոնի լաբորատորիաները համալրված են և շարունակում են համալրվել ժամանակակից երկրաֆիզիկական սարքավորումներով, որոնք բացի ուսումանկանից ասպիրանտներին և մագիստրոսներին հնարավորություն է տալիս կատարելու գիտահետազոտական ուսումնասիրություններ:

Ամբիոնի աշխատակիցների համահեղինակությամբ տպագրության է ներկայացվել «Ընդհանուր երկրաֆիզիկա» հայալեզու դասագիրքը:

Ամբիոնը շարունակել է իր համագործակցությունը ՀՀ ԳԱԱ-ի երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի, արտակարգ իրավիճակների նախարարության,

«Սեյսմիկ Պաշտպանության Ազգային Ծառայության» և Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի հետ:

Ամբիոնի աշխատակիցները շարունակում են կատարել գիտա-արտադրական բնույթի աշխատանքներ և տալ խորհրդատվություններ՝ օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման, ինժեներական երկրաբանության ու հիդրոերկրաբանության ոլորտներում: Մասնավորապես ուսումնասիրություններ են կատարվել Արցախի հանրապետության Լիսագորի պղնձի հանքային դաշտում, Հայաստանի Շորժայի քրոմիտների հանքավայրում և ինժեներա-երկրաբանական հետազոտություններ Դիլիջանի Միջազգային դպրոցի տարածքում:

<u>Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոն</u>

Վերջին երկու տարիների ընթացքում ամբիոնը ձեռք է բերել ժամանակակից ինժեներական երկրաբանության և ջրաերկրաբանության ուսումնասիրությունների սարքավորումներ, որոնք օգտագործվում են լաբորատոր և գիտահետազոտական աշխատանքներում: Նշված սարքավորումները թույլ են տալիս ամբիոնի աշխատակիցներին կատարելու կարևոր ուսումնասիրություններ նշված բնագավառում:

Հաշվետու ժամանակահաշրջանում ամբիոնի դասախոսական կազմի կողմից հրատարակվել է 11 գիտական հոդված: Ամբիոնի կողմից հրատարակվել է 1 ուսումնական ձեռնարկ՝ «Ընդհանուր ջրաերկրաբանություն» և մեկ ուսումնամեթեղական ձեռնարկ՝ «Դիսպերս գրունտների դինամիկական անկայունություն» վերնագրով:

<u>Հաշվետու ժամանակաշրջանում սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնում</u>

Վերանայվել և արդիականացվել են ամբիոնի կողմից դասավանդվող ուսումնական առարկաների ծրագրերը և ուսանողներին հրամցվող նյութը

Կազմակերպվել է ***հանրապետական գիտաժողով*** նվիրված ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրներին: Հրատարակվել է գիտաժողովի նյութերի ժողովածուն:

Ամբիոնում կազմակերպվել է Շվեյցարիայի քաղաքացի, Ժնևի համալսարանի ուսանող Բահրամ Խաղանիի անհատական ծրագրով ուսուցումը:

<u>Գեոմորֆոլոգիայի և քարտեզագրության ամբիոնում</u>

Ուսումնական պրոցեսը ապահովվում է 11 դասախոսների կողմից, որոնցից 7-ը հիմնական, իսկ 4-ը հրավիրված են (այդ թվում 2 գիտ. դոկտոր, 6 գիտ. թեկնածու): Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի դասախոսական կազմը համալրվել է ևս երկու երիտասարդ գիտության թեկնածուներով՝ ամբիոնի ներքին ռեսուրսների հաշվին: Դասախոսական կազմը ակտիվորեն մասնակցում է ԵՊՀ համապատասխան բաժնի կողմից կազմակերպված որակավորման բարձրացման դասընթացներին: Ակտիվ է նաև ամբիոնի գիտական

գործունեությունը: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել է թվով 10 գիտական հոդվածներ: Հոդվածների մի մասը զեկուցվել է միջազգային գիտաժողովներում: Տպագրվել է մեկ ուսումնական ձեռնարկ, ավարտման փուլում է ևս մեկը: Ամբիոնում պատրաստվել են ատենախոսություններ միկրոկլիմայական գործոնի ազդեցությունը աղբույսերի տեղաբաշխման վրա, ՀՀ վտանգավոր երևույթների ռիսկի գնահատումը թեմաներով, որոնցից երկրորդը պաշտպանվել է, իսկ մյուսը գտնվում է պաշտպանության փուլում:

Սերվիսի ամբիոնը

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի կողմից ներդրվել է թվով 8 նոր դասընթաց:

Ամբիոնը հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել է թվով 5 կլոր սեղան-քննարկումներ՝ նվիրված Սերվիսի և կայուն զբոսաշրջություն դասավանդման, մասսայականացման, փորձի փոխանակման նպատակներին:

Ամբիոնը կազմակերպել է 3 միջազգային և 4 հանրապետական սեմինարներ: Ամբիոնի դասախոսները շարունակում են մասնակցել <<Կայուն զբոսաշրջության կառավարման>> միջազգային TEMPUS 4 ծրագրի, որի շրջանակներում հրատարակել են թվով 5 դասագիրք և 3 ուսումնական ձեռնարկ: Ամբիոնի անդամները ներկայացրել են եվրոպական մասնակից համալսարաններին <<Կայուն զբոսաշրջություն>> մագիստրական ծրագրիր, որոնք ԵՊՀ օրինակով 3 համալսարաններում իրականացնում են դասավանդում տվյալ մասնագիտության համար:

Նշված ժամանակահատվածում հիմնովին փոխվել է Սերվիս մասնագիտության ուսումնական պրակտիկայի ծրագիրը, բովանդակությունը, հաշվետվությունների հանձնման ձևերը, որոնք ներկայացվել են Հայաստանում Սերվիս մասնագիտությամբ բաժիններ ունեցող հանրապետության այլ բուհերին:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի ուժերով կազմակերպվել և անցկացվել է Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Ռեգիոնալ տարածաշրջանային կենտրոնի կարգավիճակով զբոսաշրջիկների վերապատրաստում:

Այս ժամանակատավածում ամբիոնի անդամները մասնակցել են միջազգային, հանրապետական գիտաժողովների, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության վարչության հետ միասին կառավարություն են ներկայացրել ՀՀ-ում զբոսաշրջության նոր հայեցակարգ:

Ամբիոնի անդամները հրատարակել են թվով 10 բուհական դասագիրք և ուսումնական ձեռնարկ:

Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոն

հաշվետու ժամանակաշրջանում վերանայվել են կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական ուսումնական պլաններն ու համապատասխան ծրագրերը, վերամշակվել ու թարմացվել են առարկայական բոլոր ծրագրերը:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնը շարունակել է հաջողությամբ համագործակցել ռուսական պետական ջրաօդերևութաբանական համալսարանի (ՌՊՋՕՀ, Սանկտ-Պետերբուրգ) հետ: Համատեղ կազմվել է մագիստրական կրթական նոր ծրագիր՝ «Կիրառական ջրաօդերևութաբանություն», որը պետք է իրականացվի համատեղ:

Ամբիոնիում կատարվել են գիտական հետազոտություններ հետևյալ ուղղություններով.

- կլիմայի փոփոխություն և հարմարվողականություն
- ՀՀ տարածքում օդի ջերմաստիճանի և մթնոլորտային տեղումների տարածաժամանակային փոփոխությունների վերլուծումը և գնահատումը կլիմայի փոփոխության համատեքստում
- ՀՀ ջրային ռեսուրսների խոցելիության գնահատումը և ջրային օբյեկտների հարմարվողականության ուղիների մշակումը կլիմայի փոփոխության պայմաններում
- ՀՀ գետերի էքստրեմալ ելքերի ռիսկի գնահատում

Ամիոնի դասախոսները մասնակցել են միջազգային գիտական կոնֆերանսների Իտալիա, Իսպանի, Վրաստան, հանդես եկել համապատասխան զեկուցումներով:

Ամբիոնի բոլոր դասախոսները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նաև դասախոսների որակավորման բարձրացման ծրագրին:

Ամբիոնի ասպիրանտները և ուսանողները ակտիվ մասնակցություն են ունեցել մի շարք գիտական սեմինարների աշխատանքներին, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներին:

Չնայած նշված բնագավառներում ամբիոններում կատարած դրական աշխատանքներին, ամբիոնները դեռ լուրջ անելիքներ ունեն: Հատկապես արտադրական պրակտիկաների կազմակերպման խնդրում:

Կարծում եմ, որ մեր ամբիոնների ակտիվ գործունեության արդյունքում մենք կարող ենք պայմանագրեր կնքել տարբեր ձեռնարկությունների հետ, մեր բոլոր ուսանողների արտադրական պրակտիկաները կազմակերպելու և անցկացնելու համար: Այստեղ մեծ է ամբիոնի վարիչների դերը: Մենք պետք է ամբիոնի վարիչներից պահանջենք որպեսզի նրանք շարունակեն նախօրոք աշխատանք տանել գտնելու և պայմանագրեր կնքելու հանրապետությունում գործող մասնավոր ձեռնարկությունների հետ, որոնք շահագրգռված են իրենց մոտ արտադրական պրակտիկաները կազմակերպելու համար:

Ուսումնական պրոցեսի անբաժանելի մասն է կազմում նաև կուրսային աշխատանքների և ավարտական հաշվետվությունների թեմաների ընտրումը և դրանց կատարումը: Չնայած այդ

ուղղությամբ ամբիոններում կատարվել է որոշակի դրական աշխատանք, կցանկանայի նշել, որ այս գործում մեր որոշ ամբիոններում կան որոշակի բացթողումներ, հատկապես կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների ընտրման հարցում: Ոչ բոլոր կուրսային և ավարտական աշխատանքներին են, որ պարունակում են հետազոտական աշխատանք չեն կիրառվում գիտության ժամանակակից ձեռքբերումները աշխատանքները կատարելիս: Իսկ առանձին դեպքերում էլ նկատվում է կատարված թեմաների կրկնություն:

Ուսումնական գործընթացի կազմակերպման անբաժանելի մասն է կազմում ընթացիկ քննությունների և պարտքերի մարման կազմակերպումն ու անցկացումը: Դեկանատի կողմից ժամանակին կազմվում են բոլոր քննությունների ժամանակացույցը, ամբիոնների կողմից աշխատանքներ են տարվում քննություններն ընդունված կարգով անցկացներու համար:

Քննությունների արդյունքները քննարկվել են ֆակուլտետի խորհրդի նիստերում:

Վերլուծելով ամբիոններում կատարված աշխատանքները, հատկապես ուսման բնագավառում, կարող եմ ասել, որ այն մեզ չի բավարարում: Նշված խնդրում ամբիոնի վարիչի պատասխանատվությունը մեծացնելու նպատակով ֆակուլտետի խորհրդում լսել ենք առանձին ամբիոնների վարիչների հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ:

Կցանկանայի մի քանի խոսք ասել կուրատորների գործունեության վերաբերյալ: Այս ուս.տարում պլանի համաձայն նախատեսված է լսել ամբիոնի վարիչների, կուրատորների առանձին դասախոսների, հաշվետվությունը կատարած աշխատանքի վերաբերյալ և ես կարծում եմ, որ այդ լսումների արդյունքում մենք պետք է որոշում կայացնենք յուրաքանչյուր հաշվետուի վերաբերյալ:

Դեկանատի ամենօրյա ուշադրության կենտրոնում է եղել մագիստրական ծրագրերի կատարման գործընթացը ամբիոններում: Գիտենք, որ ուսուցումը մագիստրատուրայում կրում է անհատական բնույթ, որտեղ մեծ տեղ է հատկացվում անհատական պարապմունքներին:

Մեզ մոտ մագիստրատուրայի խմբերն ըստ մասնագիտությունների բավականին փոքր են՝ 5-6 հոգի, որը և հնարավորություն է ընձեռում բարձրացնելու լաբորատոր, գործնական պարապմունքների անցկացման որակը, նրանց ընդգրկել ամբիոնում տարվող գիտահետազոտական աշխատանքներին: Խոսելով մագիստրատուրայի բաժնում սովորող ուսանողների մասին, ցանկանում եմ նշել, որ այսօր նրանց մակարդակը անհամեմատ ավելի բարձր է քան անցյալում, բոլոր շրջանավարտները տիրապետում են համակարգչային ծրագրերին:

Ուսումնական աշխատանքին զուգընթաց ֆակուլտետում կատարվում են տնտեսության համար հետաքրքրություն ներկայացնող կարևոր գիտահետազոտական աշխատանքներ:

Ուզում եմ նշել, որ ֆակուլտետում տարվող գիտահետազոտական աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում ասպիրանտները, հայցորդները և մագիստրատուրայի ու բակալավրի բաժնի մեր լավագույն ուսանողները: Հաշվետու ժամանակաշրջանում

ֆակուլտետում կատարվել են գիտահետազոտական աշխատանք մեկ թեմայի ուղղությամբ, որը ֆինանսավորվում է պետ.բյուջեից:

Ֆակուլտետում գործում է «Կիրառական երկրաբանության» լաբորատորիան: Ֆակուլտետի աշխատակիցները մասնակցել են նաև ՀՀ տարածքում իրականացվող գիտա-արտադրական աշխատանքներին:

Մեր լավագույն մասնագետները իրենց մասնակցությունն են բերում հանրապետությունում տարբեր կազմակերպությունների կողմից կատարվող գիտաարտադրական աշխատաքներին: Այսօր աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետը կարող եմ ասել որ դարձել է հանրապետության ուղղություններով հետազոտությունների, ուսումնասիրությունների կենտրոն, առաջատար կազմակերպություն: Ֆակուլտետն ունի մասնագետների մեծ ներուժ, էլ ավելի մեծացնելու ֆակուլտետի մասնագետների մասնակցությունը հանրապետությունում և նրա սահմաններից դուրս կատարվող գիտաարտադրական աշխատանքներին:

Ֆակուլտետի մեծ թվով աշխատակիցներ մասնակցել են միջազգային սեմինարների, կոնֆերանսների և խորհրդակցությունների, որտեղ հանդես են եկել գիտական զեկուցումներով:

Մեր լավագույն շրջանավարտները, որոնք հակում և ցանկություն ունեն մնալու և աշխատելու ամբիոններում, մենք ձգտում ենք ապահովել ասպիրանտական տեղով, կամ էլ ընդգրկում ենք մեր կողմից կատարվող գիտական թեմաների աշխատանքներում: Ուղղակի մեր ամբիոններում պետք է լուրջ հոգատարության մթնոլորտ ստեղծվեն երիտասարդ մասնագետների համար: Մենք ձգտում ենք մի շարք գիտահետազոտական ինստիտուտներում և ձեռնարկություններում աշխատող լավագույն մասնագետներին ընդգրկել մեր ուսումնական աշխատանքների կազմակերպմանը և անցկացմանը՝ հնարավորություն տալով նրանց անցկացնելու տեսական մասնագիտական կուրսեր ֆակուլտետում:

Դեկանատն ընթացիկ ուս.տարում բավականին աշխատանք է տարել ուսանողների դաստիարակչական, կարգապահության և հաճախումների ուղղությամբ:

Բոլոր կուրսերի ուսանողների հետ կազմակերպվել են հանդիպումներ դեկանի, դեկանի տեղակալների, ամբիոնի վարիչների, կուրատորների հետ, որտեղ քննարկվել են ուսումնական, դաստիարակչական և ուսանողներին հուզող հարցեր:

Հաշվետու ժամանակաշրջանում դեկանատի ուշադրության կենտրոնում է եղել նաև աշխատանքային կարգապահությունն ամբիոններում, դասախոսների և լաբորանտական անձնակազմի աշխատանքային կարգապահության հարցը:

Դեկանատի նիստերում քննարկվել են, ամնբիոնների ծանրաբեռնվածությունների, ուսումնական պլանների, առկա, հեռակա և մագիստրական ուղեցույցների կազմման, գիտական թեմաների, գիտական կոնֆերանսների, գործուղումների կազմակերպման և ընթացիկ հարցերը: Աշխատանքներ են տարվել նաև պրոֆեսորադասախոսական և լաբորանտական

անձնակազմի հետ, կապված մատյանների և տեղեկագրերի լրացման, սեմինար, գործնական և լաբորատոր աշխատանքների կատարման ուղղությամբ:

Ֆակուլտետում մեծ ուշադրություն է դարձվում Ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին: Յուրաքանչյուր կիսամյակ ՈՒԳԸ կողմից կազմակերպվում են ուսանողական գիտական նստաշրջաններ: Մեծ թվով ուսանողներ ընդգրկված են ՈՒԳԸ աշխատանքներին: Անց է կացվել ՈՒԳԸ նստաշրջան:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներում շատ է կարևորվում Ուսանողական Խորհրդի դերը: ՈՒԽ-ում ընդգրկված են մեր լավագույն ուսանողները, ովքեր ունեն բարձր առաջադիմություն, աչքի են ընկնում իրենց կազմակերպվածությամբ և կարգապահությամբ:

Կարող եմ ասել, որ հանձինս ֆակուլտետի ուս.խորհրդի ուսանողական կյանքը ֆակուլտետում աշխուժացել է և մեր ֆակուլտետի ուսանողների ակտիվությունը մեծացել է նաև համալսարանում:

ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի կողմից ֆակուլտետում գործող Հասարակության Կայուն Զարգացման Կենտրոնի աշխատանքներին ակտիվ մասնակցում են մեր ֆակուլտետի աշխատակիցները: Նշված կենտրոնն այս տարի երկու կլոր սեղան է կազմակերպել, որը մեծ հետաքրքրություն է առաջացրել մասնագետների մոտ:

Այսօր ֆակուլտետն ապահովված է անհրաժեշտ տարածքով, լաբորատորիաներով:

Վերջացնելով հաշվետվությունս՝ ուզում եմ ասել, որ ֆակուլտետի գիտական խորհուրդն իր աշխատանքները կազմակերպել է նախօրոք կազմված աշխատանքային պլանով: Եվ իր աշխատանքային գործունեության ընթացքում միշտ զգացել է համալսարանի ռեկտորատի, հատկապես համալսարանի ռեկտոր պարոն Ա.Սիմոնյանի աջակցությունը, որի համար հայտնում եմ իմ շնորհակալությունը:

ցուցաբերած մեծ գիտելիքները՝ շեշտելով կատարված թեզերի բարձր մակարդակը: - Ամբիոնում մշտապես կատարվում են լաբորատոր աշխատանքների անցկացման համար անհրաժեշտ նյութերի բազայի ընդլայնում,- ավելացրեց Ռ.Մովսեսյանը:

Պ.Դավթյանը – Առաջարկում եմ դեկանի կատարած աշխատանքը գնահատել բավարար: Պ.Դավթյանը նշեց, որ ամբիոնի դասախոսները ակտիվ մասնակցում են միջազգային գիտաժողովներում, իրականացվում ատենախոսություններ, որոնցից մի քանիսը վերջնական փուլում են: - Այս ամենի գրավականն եմ համարում Մ.Գրիգորյանի կարգախոսը <ամեն հարցում ընդառաջել երիտասարդ մասնագետներին>: Պ.Դավթյանը դիմեց ժամանակակից գործիքներ (GPS) ձեռք բերելու խնդրանքով՝ դրանով իսկ ապահովելով գործնական և լաբորատոր պարապմունքների բարձր մակարդակը և մրցունակ դարձնել ամբիոնը:

Վ. Վարդանյան - Դեկանի աշխատանքն առաջարկեց գնահատել բավարար: Հայտնեց մտահոգությունը, ամբիոնում ժամանակակից սարքավորումների առկայության պայմաններում, ֆակուլտետում պետ.բյուջեից ֆինանսավորվող թեմաների բացակայության հարցով:

Թ.Վարդանյան – Առաջարկում եմ դեկանի 2014-2015 ուս.տարում կատարած աշխատանքը գնահատել բավարար: Խոսքի սկզբում Թ.Վարդանյանը նշեց, որ թերահավատորեն էր մոտենում աշխարհագետների և երկրաբանների միասնականությանը, սակայն Կայուն Զարգացման Կենտրոնի առկայությունը և համագործակցելու հնարավորությունը ապացուցեցին հակառակը: Թ.Վարդանյանը նշեց, որ ամբիոնի դասախոսները ակտիվորեն մասնակցել են դասախոսների որակավորման բարձրացման ծրագրին: - Ամբիոնը հաջողությամբ համագործակցել է ռուսական պետական ջրաօդերևութաբանական համալսարանի հետ (ՌՊՋՕՀ), ինչը վկայում է Մ.Գրիգորյանի համագործակցություն վարելու կարողության մասին - խոսքի վերջում ավելացրեց նա:

Մ. Մանասյան – Դեկանի աշխատանքը առաջարկում եմ գնահատել բավարար: Մ.Մանասյանը առաջնային համարեց հետամուտ լինել ուսման առաջադիմության խնդրին: Մ.Մանասյանը խոսեց ֆակուլտետում ընդհանուր մթնոլորտի մասին:

Մ.Սուվարյան **–** Առաջարկում եմ դեկանի կատարած աշխատանքը գնահատեց բավարար: Ս.Սուվարյանը նույնպես ընդգծեց ֆակուլտետի դեկանի պատրաստակամ վերաբերմունքը սկսնակ և երկտասարդ մասնագետներին օգնելու հարցում: Հայտնեց իր գոհունակությունը ամբիոնում TEMPUS ծրագրի հետ շարունակվող համագործակցության հարցում:

Վերջում պրոռեկտոր ***Գ.Գևորգյանը*** պատասխանեց տրված բոլոր հարցերին:

Որոշեցին - դեկան Մ.Ա.Գրիգորյանի ներկայացված հաշվետվությունը և մեկ տարվա կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Որոշումն անցավ միաձայն:

Գիտ. խորհրդի նախագահ՝ Ռ. Մինասյան

Գիտ. խորհրդի քարտուղար՝ Ե.Մանուկյան